

# ՈՒՂԵՑՈՒՅՑ

## 9-րդ դասարանի ավարտական քննության

Ուղեցույցի նպատակն է օգնել հանրակրթական հիմնական դպրոցի 2023-2024 ուստարվա 9-րդ դասարանցիներին՝ արդյունավետ նախապատրաստվելու «Ֆիզիկա» առարկայի ավարտական քննությանը և կողմնորոշելու ուսուցիչների գործունեությունն այդ ուղղությամբ:

Քննական թեստը կազմվում է հանրակրթական հիմնական դպրոցի «Ֆիզիկա» առարկայի չափորոշիչներին և ծրագրերին համապատասխան՝ գործածվող դասագրքերի հիման վրա:

### 1. Առաջադրանքների բաշխումն ըստ ներկայացման ձևի

Թեստի առաջադրանքները ներկայացված են ընտրովի պատասխանով, կարճ և ընդարձակ պատասխաններ պահանջող:

Ներկայացման ձևը	Առաջադրանքի համարը	Ընդհանուր միավորը
Ընտրովի պատասխանով	1-22	22
Կարճ պատասխանով	23-30	4
Ընդարձակ պատասխանով	31-35	5
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>	<b>1-35</b>	<b>35</b>

Քննական թեստի առաջադրանքները կատարելուց հետո աշակերտը պետք է լրացնի պատասխանների ձևաթուղթ, որի ճիշտ լրացումից է կախված նրա քննական արդյունքը:

**Ընտրովի պատասխանով** առաջադրանքները կատարելիս տրված 4 պատասխանից պետք է ընտրել միակ ճիշտ պատասխանը և պատասխանների ձևաթղթի տվյալ առաջադրանքի համապատասխան վանդակում կատարել «X» գրառումը (նկ.):

	1	2	3	4
1	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
2	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
3	<input checked="" type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>
4	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>	<input type="checkbox"/>

**Կարճ պատասխան** պահանջող յուրաքանչյուր առաջադրանքի (ենթաառաջադրանքի) պատասխանը (բառ, բառակապակցություն, թիվ, թվային արժեք՝ չափման միավորով) պետք է գրել պատասխանների ձևաթղթում՝ դրա համար առանձնացված տեղում (օր.՝ մագնիս, կինետիկ էներգիա, 12, 45 կգ, 21 մ/վ և այլն): **Պատասխանը պարտադիր պետք է բերված լինի միավորների ՄՀ համակարգի, եթե առաջադրանքում լրացուցիչ հրահանգ չկա:**

Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքները կատարելու համար թեստ-գրքույկի համապատասխան տեղում պետք է մանրամասն ու հիմնավորված ներկայացնել առաջադրանքի կատարման ողջ ընթացքը (կատարվող բոլոր քայլերի գրանցումով, պահանջվող բանաձևերով, մաթեմատիկական հաշվարկներով և պատասխանի ստացումով): Ընդարձակ պատասխան պահանջող առաջադրանքները պետք է կատարել թեստ-գրքույկի համապատասխան տեղում (**չեն անցկացվում պատասխանների ձևաթուղթ**):

Աշակերտն ունի սխալ նշած պատասխանն ուղղելու 4 հնարավորություն, որից 2-ը՝ ընտրովի պատասխանով, 2-ը՝ կարճ պատասխան պահանջող առաջադրանքների: Եթե անհրաժեշտ է փոխել սխալ նշված պատասխանը, ապա պատասխանների ձևաթղթի՝ սխալ

նշված պատասխանները փոխելու տեղում անհրաժեշտ է նշել առաջադրանքի համարը և համապատասխան վանդակում գրառել «X» նշանը կամ գրել կարճ պատասխանը:

**2. Առաջադրանքների բաշխումն ըստ դասընթացի բաժինների**

Ստուգվում են աշակերտի գիտելիքներն ու կարողությունները ծրագրով նախատեսված բոլոր բաժիններից՝ հետևյալ մոտավոր համամասնություններով.

Հ/հ	Թեմա	Միավորներ
1	Մեխանիկական երևույթներ	16
2	Ջերմային երևույթներ	6
3	Էլեկտրամագնիսական երևույթներ	6
4	Օպտիկական երևույթներ	3
5	Ատոմային միջուկի կառուցվածքը	2
6	Աստղագիտություն	2
<b>ԸՆԴԱՄԵՆԸ</b>		<b>35</b>

**3. Գրավոր աշխատանքի գնահատման չափանիշները**

Առաջադրանքներից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Ընտրովի և կարճ պատասխանով առաջադրանքների՝ պատասխանների ձևաթղթում ջնջումներով կատարված *ուղղումների համար միավոր չի տրվում:*

Եթե թեստ-գրքույկում բացակայում է ընդարձակ պատասխաններով առաջադրանքների լուծման ընթացքը, ապա *միայն պատասխանի գրառման համար միավոր չի տրվում:*

Թեստ-գրքույկը և պատասխանների ձևաթուղթը լրացվում են **կապույտ գրիչով**, իսկ ստուգումը կատարվում է **կարմիր գրիչով:**

**4. Աշխատանքի համար հատկացվող ժամանակը**

Քննական աշխատանքի կատարման համար հատկացվում է 120 րոպե:

**5. Ցուցումներ**

ա) Բոլոր այն առաջադրանքներում, որտեղ հատուկ վերապահում չկա, թվաբանական հաշվարկները հեշտացնելու և պատասխանների միարժեքությունն ապահովելու նպատակով, պետք է ընդունել.  $\pi = 3,14$ ;  $\pi^2 = 10$ ;  $\sqrt{2} = 1,4$ ;  $\sqrt{3} = 1,7$ , իսկ  $g = 10$  Ն/կգ:

